

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13**

**ՀՀ Լոռու մարզպետի կողմից համայնքների ղեկավարների հետ  
անցկացվող խորհրդակցության**

06.07.2017թ.

**ք.Վանաձոր**

**Մասնակցում էին**

Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ

Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Օհանյանը, Ն.Ասրյանը, Ա.Դեմիրջյանը, Վ.Դոխոյանը- մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ և հրավիրված համայնքների ղեկավարներ

**Օրակարգում՝**

1. Իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքվելիք աղբահանության պայմանագրերի մասին  
/Ձեկ. Ա. Ջանազյան /
2. Իրավաբանական և ֆիզիկական անձանց աղբահանության վարձավճարի չափի մասին  
/Ձեկ. Ա. Ջանազյան /
3. Մարզում թափոնների կառավարման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին  
/Ձեկ. Ա. Դեմիրջյան /
- 4.«Մաքուր Հայաստան» ծրագրի իրականացման նպատակով շրջակա միջավայրի մաքրության ապահովման միջոցառումների ծրագրի ժամանակացույցի մասին  
/Ձեկ. Ա. Օհանյան /
- 5.Մարզում գործող գազի և բենզինի լցակայանների նորմատիվային պահանջներին համապատասխանության մասին  
/Ձեկ. Ա. Օհանյան /
6. Մարզում հայտնաբերված աղբավայրերի փակման, «Մաքուր Հայաստան» ծրագրի համապարփակ իրականացման և շրջակա միջավայրի մաքրության ապահովման աշխատանքների մասին  
/Ձեկ. Ա. Օհանյան /
7. Համայնքների ավագանիների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց համար աղբահանության դրույքաչափերի սահմանման համայնքի զարգացման ծրագրերում աղբահանության և սանիտարաման մաքրման միջոցառումների ծախսերի և եկամուտների, դրանք առանձին տողով համայնքների բյուջեներում ներառելու մասին  
/Ձեկ. Ա. Օհանյան /
8. Մարզի համայնքներում աղբահանության կազմակերպման հաշվարկների մասին  
/ Ձեկ. Ն.Ասրյան /
9. Մարզի համայնքների բյուջեների 6 ամիսների սեփական եկամուտների կատարման մասին  
/ Ձեկ. Ն.Ասրյան /

**Հանձնարարվեց՝**

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ. Թադևոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝

Լոռու մարզի աղբահանություն իրականացնող 16 համայնքներում 20-օրյա ժամկետում համապատասխան բաժինների կողմից կատարել գործող տնտեսավարող սուբյեկտների փաստացի գույքագրում:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

ա/ Շրջաբերական գրությամբ տեղյակ պահել համայնքների ղեկավարներին շրջակա միջավայրի մաքրության ապահովման միջոցառումների ծրագրին՝ ըստ ժամանակացույցի:

բ/ Զբոսաշրջության զարգացման նպատակով 5-օրյա ժամկետում ուսումնասիրել և ներկայացնել մարզում գործող գազի և բենզինի լցակայանների տարածքներում սանհանգույցների առկայությունը և դրանց նորմատիվային պահանջներին համապատասխանությունը:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

ա/ Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի համայնքներում աղբահանության կազմակերպման հաշվարկների նկատմամբ:

բ/ Վերահսկողություն սահմանել մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման նկատմամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ.Ձ.Սաղաթեյան

Հեռ. 0322 /2-31-99/